ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՆԴԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ 1915-1916 ԹԹ.

Տ. Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Թուրքական իշխանությունների իրականացրած հայոց Մեծ եղեռնի առաջին գործողություններից մեկը Թուրքիայի հայ մտավորականության ձերբակալությունը, աքսորն ու ոչնչացումն էր: Դրանով թուրքական կառավարությունը ձգտում էր արևմտահայությանը զրկել ղեկավար ուժից, բողոքի հնարավորությունից: Հայ մտավորականության դեմ զանգվածային հալածանքները սաստկացան 1915թ. ապրիլից՝ ընդգրկելով Թուրքիայի բոլոր վայրերը: Հարվածն ուժեղ էր հատկապես Կ. Պոլսում, ուր գտնվում էր հայ մտավորականության սերուցքը՝ բազմաթիվ գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, քաղաքական, հասարակական ու կուսակցական գործիչներ:

Պատերազմի նախօրյակին Կ.Պոլսի բնակչությունը հաշվվում էր 600 հազար մարդ, որից 150 հազարը հայեր էին: Դրանց մեջ կային ինչպես արհեստավորներ, բանվորներ, մշակներ, մտավորականներ, այնպես էլ հարուստներ, վաճառականներ, պետական ազդեցիկ պաշտոնյաներ և այլն՝: Ինչպես Կ.Պոլսում, այնպես էլ ողջ Թուրքիայում բավական մեծ էր պոլսահայության ազդեցությունը, և մայրաքաղաքից արտասանված՝ հայ գործչի խոսքերը կարևոր նշանակություն ունեին արևմտահայության համար: Կ.Պոլսում էին կենտրոնացած հայ մշակութային հաստատությունների մեծ մասը, ազգային հասարակական-քաղաքական միտքն ու մտավոր ներուժը՝ իրենց փայլուն ներկայացուցիչներով և գործունեության համազգային ընդգրկումներով: Կ.Պոլսի հայ մտավորականությունը բազմաթիվ թելերով կապված էր հայ գավառին, շատ դեպքերում ընթացք և ուղղություն էր տալիս վերջինիս մտավոր և մշակութային զարգացմանը: Առանց չափազանցության կարելի է ասել, որ Կ. Պոլսի հայ մտավորականության կործանման մտահղացումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ազգի հոգևոր և մտավոր կարողությունների կործանման մտահղացում: Սա էր այն հիմնական պատճառը, որ թուրքական կառավարությունը եղեռնը սանձազերծելուց անմիջապես առաջ գործի անցավ օր առաջ ազատվելու այդ «անհարաղատ տարրից»: Պոլսահայությունից երիտթուրքական կառավարությունը ցանկանում էր ազատվել դեռ պատերազմի սկզբում, սակայն անգլո-ֆրանսիական նավատորմի ձեռնարկած Դարդանելի օպերացիան, ինչպես նաև Կ.Պոլսի միջազգային կապերը նրան հարկադրեցին առժամանակ հետաձգել իր պլանները և բավարարվել պոլսահայ մտավորականության ոչնչացմամբ: Թուրքական իշխանությունները չունենին նաև պոլսահայ ողջ բնակչությանն այդ ժամանակ տեղահանելու տեխնիկական հնարավորություններ: Կայսրության մայրաքաղաքը ծանր կացության մեջ էր դաշնակիցների սպառնալիքների ներքո: Նման պայմաններում իթթիհադական կենտրոնում բուռն վիճաբանություններից հետո հաղթում է առայժմ միայն հայ անվանի մարդկանց աքսորելով բավարարվելու, իսկ

---

[1] *Մ. Արզումանյան, Հայաստան 1914-1917, Ե., 1969, էջ 320:*

մնացածին ավելի պատեհ ժամանակ տեղահանելու և կոտորելու տեսակետը[2]: Կանխավ ծրագրավորված եղանակով հայ մտավորականները խումբ-խումբ ձերբակալվեցին և ուղարկվեցին երկրի հեռավոր վայրերը՝ ոչնչացվելու համար:

Ծրագիրն անմիջականորեն գլխավորում էին Կ. Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյը, նրա՝ քաղաքական գծով օգնական Ռեշադը և ընդհանուր ապահովության պետ Ջանփոլադը[3]: Թուրքական կառավարության կողմից նախօրոք կազմված սև ցուցակի համաձայն, հատուկ կնքված ծրարներ ուղարկվեցին ոստիկանական բոլոր տեղամասերն ու պահակակետերը՝ գրանք որոշակի օրը և ժամին բացելու կարգադրությամբ: Դրանով իշխանությունները ցանկանում էին բացառել որևէ տեղեկատվության տարածումը՝ ավելորդ դժվարություններից խուսափելու համար:

Եվ 1915թ. ապրիլի 10-ի լույս 11-ի գիշերը (ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը) ժամը 11-ից 1-ը՝ երկու ժամվա մեջ[4] Կ. Պոլսի տարբեր մասերից կենտրոնական բանտ՝ Մեթթերհանե է բերվում հայ մտավորականների՝ գրողների, կոմպոզիտորների, ուսուցիչների, փաստաբանների, լրագրողների և հոգևորականների առաջին խումբը՝ շուրջ 200 հոգի: Նրանց 24 ժամյա բանտարկությունից հետո, 1915թ. ապրիլի 12 (25)-ի գիշերը տանում են Հայդար-փաշայի նավամատույցը և այդտեղից հատուկ գնացքով ուղարկում Անատոլիայի խորքերը:

Այս մասին առաջին լուրերը հայ պարբերականների միջոցով հասարակությանն է հասնում 1915 թ. ապրիլի վերջին, մայիսի սկզբին: Սակայն այդ տեղեկությունները, որոնք հիմնականում ստացվում էին Եվրոպայից, կցկտուր էին, ոչ լիարժեք և միայն երևույթի ընդհանուր պատկերն էին տալիս: Այսպես, ապրիլի 24-ին «Մշակ» թերթում հայտնվում է հաղորդագրություն Կ. Պոլսում Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության անդամների, առհասարակ հայերի ձերբակալությունների և աքսորի մասին: Հաղորդվում է նաև հայոց պատրիարքի բանտարկության մասին[5]: Մի քանի օր հետո «Մշակը» ստանում է Պետրոգրադի հեռագրական գործակալության հեռագիրը, որտեղ ասվում էր. «Կ. Պոլսից հաղորդում են, որ հայոց պատրարքը կատեգորիկ մերժեց Թուրքիայի կառավարության առաջարկը՝ թողնելու և մեկնելու մայրաքաղաքից... Պատրիարքի և կառավարության հարաբերությունները չափազանց լարված են: Այժմ կառավարությունը ինչ-որ դավադրության պատրվակով մտադիր է բանտարկել հայոց պատրիարքին և ականավոր հայ երեսփոխաններին՝ բոլորին աքսորելով Փոքր Ասիա»[6]: Իսկ հաջորդ օրը, հենվելով «Times» թերթի հաղորդման վրա, «Մշակը» գրում է. «Կ. Պոլսում կալանավորվել են հայոց պատրիարքը, նրա խորհուրդը և 1500 ազդեցիկ հայեր»:[7] Իհարկե, այս տեղեկությունները դեռևս անկանոն էին և չճշտված, քանզի թուրքական իշխանությունները մանրակրկիտ ծրագրավորել էին իրենց գործողությունները՝ բավականաչափ հոգ տանելով նաև տեղեկատվության հոսքի առավելագույն սահմանափակման ուղղությամբ:

---

[2] Ս. Ակունի, Միլիոն մը հայերու ջարդի պատմությունը, Կ.Պոլիս, 1920, էջ 105:
[3] Մ. Արղումանյան, նշվ. աշխ., էջ 320:
[4] Հորիզոն, Թիֆլիս, 9. X. 1915:
[5] Մշակ, Թիֆլիս, 24. IV. 1915:
[6] Նույն տեղում, 28. IV. 1915:
[7] Նույն տեղում, 29. IV. 1915:

1915թ. մայիսի 9-ին «Հորիզոն» լրագիրը ստանում է Սոֆիայից ապրիլի 26-ին ուղարկված և Կ. Պոլսում տեղի ունեցածի ավելի հստակ պատկերը տվող հաղորդագրություն, որում ասվում էր. «Պոլսում տեղի են ունեցել մասսայական ձերբակալություններ. ձերբակալված են մոտավորապես 200 հոգի, որոնց թվում էին Խ. Մալումյանը, Խաժակը, Շահրիկյանը, Հրաչը, Շահպազը, Սիամանթոն, Զարդարյանը, Ս. Մինասյանը, Վարուժանը, դոր. Շաչյանը, վարդապետներ՝ Պալլարյանը, Կոմիտասը, Հովնանը, Հուսիկ քահանան, Լևոն Լարինցը, Ներսես Զաքարյանը, Զաուշյանը, Արամ Անտոնյանը, Երվանդ Օտյանը, Կիկոն և Կավռոչը և շատ ուրիշներ: Խիստ խուզարկություններ տեղի ունեցան Պատրիարքարանի մեջ... Բռնվածները բոլորը ուղարկված են Ղոնիա»[8]:

«Հորիզոնի» խմբագրությունը ստանում է նաև հաղորդագրություն Կ. Պոլսից, որտեղ, հաստատելով հայ մտավորականության ձերբակալության իրողությունը, հաղորդվում է. «Կալանավորները... բոլորն ալ ղրկված են Զանղրի, Գոնիա և Էնկիտի քաղաքներ: Կալանավորներու աքսորավայրերը ուղարկելու գործողությունը կատարված է ժանդարմերիական ամենակոպիտ միջոցներով»[9]:

Թուրքական կառավարությունը սկսում է արևմտահայ մտավորական ուժի ոչնչացումը, ինչպես գրում է «Հորիզոնում» Ա. Շահխաթունյանը, առանց քաղաքական դավանանքի խտրության. «Երևի համոզել էր գերմանական շտաբին, որ սրանք բոլորն էլ լրտեսներ և խառնակիչներ են»[10]:

Հայ մտավորականների առաջին խմբի ձերբակալությունից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը Գրիգոր Զոհրապի և այլոց հետ ապրիլի 13 (26)-ին այցելում է Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշային, նրան ներկայացնում Զոհրապի կազմած հուշագիրը, որում մտահոգություն էր հայտնվում հայերի նկատմամբ կիրառվող գործողությունների առնչությամբ, խնդրվում էր դադարեցնել կայսրությունում հայության նկատմամբ ծայր առած հալածանքները և հայտնվում էր, որ «հայոց դեմ ձեռք առնված միջոցառումները սահմանադրական կառավարության մը արդար զգացմունքներուն չի համապատասխաներ բնավ»[11]:

Սակայն, «հայ ինտելիգենցիայի և պլուտոկրատիայի մեջ ապրիլի 11-ին սկսված ձերբակալությունները շարունակվում են ամբողջ շաբաթ, և ձերբակալվածները առանց դատի ու քննության աքսորվում են Փոքր Ասիայի հարավային վիլայեթներ, ուր նրանց սոսկալի տանջանքների էին ենթարկում»[12]:

1915թ. ապրիլի 24-ից 29-ը ձերբակալվում, ապա խումբ-խումբ Անատոլիայի խորքերն են աքսորվում հայ անվանի երեսփոխաններ, ուսուցիչներ, բժիշկներ, արվեստագետներ, հոգևորականներ, լրագրողներ և այլ մասնագիտության տեր հայտնի ու ազդեցիկ մարդիկ՝ թվով ավելի քան

---

[8] Հորիզոն, Թիֆլիս, 9. V. 1916:
[9] Նույն տեղում, 16. V. 1916:
[10] Նույն տեղում, 13. V. 1916:
[11] Զ ա վ ե ն ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս, Պատրիարքական հուշերս, վավերագրեր և վկայություններ, Կահրե, 1947, էջ 98-100:
[12] Հորիզոն, Թիֆլիս, 21. V. 1916:

800 հոգի[13]: Մտավորականների խմբերը սկզբում աքսորվեցին երեք վայրեր՝ քաղաքականությամբ զբաղվողները՝ Այաշ գյուղ, մյուսները՝ Անկարայի և Գաստեմունիի միջև գտնվող Զանղըր փոքրիկ քաղաքը և Զանղըրի և Ամասիայի միջև գտնվող Զորում վայրը: Սկզբում նախատեսվում էր Անկարայում զինվորական դատարաններ գումարել և նրանց դատել: Հետո աքսորյալներին հավաստիացնում էին, թե նրանք դատարանի առջև կկանգնեն Դիարբեքիրում և այլուր[14]:

Սակայն թուրքական կառավարությունը ոչ մի փաստ չուներ այդ մարդկանց դեմ մեղադրանք հարուցելու, և բացի այդ, ծրագրված էր հայ անվանի մարդկանց ուղղակի ոչնչացնել աքսորի ճանապարհին:

Կ. Պոլսից աքսորված և տարբեր վայրերում խողխողված հայ անվանի մտավորականների շարքում էին Օսմանյան խորհրդարանի անդամներ Գրիգոր Զոհրապը և Վարդգեսը (Հովհաննես Սերենգյուլյան), որոնք ձերբակալվել էին 1915թ. օգոստոսին (նրանք մեղադրվում էին «պետական հանցագործության մեջ», պետք է «ներկայանային» Տիգրանակերտի զինվորական ատյանին, իսկ մինչ այդ Ադանայի և Հալեպի վրայով տեղափոխվել էին Ուրֆայի բանտ), բանաստեղծ Սիամանթոն (Ատոմ Յարճանյան), բանաստեղծ, ուսուցիչ Դանիել Վարուժանը (Չպուքքյարյան), գրող, մանկավարժ, հրապարակախոս Ռուբեն Զարդարյանը, բանաստեղծ, բժիշկ, բժշկական ընկերության նախագահ Վ. Թորգոմյանը, բժիշկ, բանասեր հրապարակախոս Նազարեթ Տաղավարյանը, բժիշկ, բանաստեղծ Ռուբեն Սևակը (Չիլինկիրյան), ուսուցիչ, գրող, հրապարակախոս Հրանդը (Մելքոն Կյուրճյան), գրող, մանկավարժ Թլկատինցին (Հովհաննես Հարությունյան), բանաստեղծ, քննադատ Արտաշես Հարությունյանը, արձակագիր, ուսուցիչ, խմբագիր Երուխանը (Երվանդ Սրմաքեշխանլյան), արձակագիր, բանաստեղծ, խմբագիր Տիգրան Զեկյուրյանը, բազմաթիվ վեպերի և պատմագիտական ուսումնասիրությունների հեղինակ Սմբատ Բյուրատը, բանաստեղծ-թարգմանիչներ Լևոն Լարենցը, Ժակ Սայապալյանը (Փայլակ), երգիծաբան, խմբագիր Գրիգոր Թորոսյանը, արձակագիր Գեղամ Բարսեղյանը, դերասան Ենովք Շահենը, հրապարակախոս, պատմաբան, «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Տիրան Քելեկյանը, բանասեր Հովհաննես Դազանչյանը, հասարակական գործիչ, խմբագիր, հրապարակախոս Եսայեմը (Գարեգին Կոզիկյան), բանասեր, պատմաբան, հրապարակախոս Գագիկ Օզանյանը, նկարիչ Հրանտ Աստվածատրյանը, բժիշկ Խան Փաշայան Կարապետյանը և հարյուրավոր ուրիշներ: Աքսորի չարչարանքներից, եղեռնի սարսափներից հոգեկան ծանր ցնցումներ ապրեց և խելագարվեց կոմպոզիտոր Կոմիտասը[15]:

Կ. Պոլսից աքսորված հայ մտավորականներից շատ քչերին՝ երգիծաբան Երվանդ Օտյանին, Թեոդիկին (Թադեոս Լաբճինճյանին, «Ամենուն տարեցույցի» հրատարակիչ), Արամ Անտոնյանին («Լույս» շաբաթաթերթի խմբագիր) և ուրիշների, թվով ընդամենը ութ հոգու, հաջողվեց խուսափել մահվան ճիրաններից: Նրանք հետագայում հայության

---

[13] Հ. Թ յ ո ւ ր ա պ յ ա ն, Դրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդ. 1915-ի ջարդերու մասին տեղեկագիրներ եվրոպական, ամերիկյան և հայկական աղբյուրներով. Փարիզ, 1946, էջ 156:

[14] Ջ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914-1916 թթ.), Ե., 1967, էջ 294:

[15] Տե՛ս Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1916-1920 թթ:

և համայն մարդկության առջև իրենց հուշագրություններով ներկայացրեցին թուրքական դժոխքում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության բազմաթիվ մանրամասներ[16]:

Նախքան նահատակվելը հայ մտավորականները ականատես են լինում Անատոլիայի ճանապարհներին, Միջագետքի անապատներում իրենց ժողովրդի տառապանքներին և բարբարոս եղանակներով տանջվելով սրի են քաշվում: Դանիել Վարուժանին ստիպում են, որ իր ձեռքերով փորի իր գերեզմանը և հետո գնդակահարում են[17], Գրիգոր Զոհրապի գլուխը քարերով ջարդում են Ուրֆայի և Դիարբեքիրի միջև գտնվող Շեյթեն-Դերե վայրում և այլն: «Թուրքահայ ժողովրդի հետ միաժամանակ ճարակվեց նաև թուրքահայ ինտելիգենցիան, որը համիդյան ջարդերի ժամանակ խնայվել էր»,- գրում է Թիֆլիսի «Հորիզոն» թերթը[18]:

Հայ մտավորականության ձերբակալությանը հաջորդում է Կ. Պոլսում գտնվող հայ պանդուխտների տեղահանումը, որոնք ուղարկվում էին իբր թե իրենց ծննդավայրերը, բայց հազիվ մայրաքաղաքից մի քիչ հեռացած, ենթարկվում էին ժանդարմների և չեթեների հարձակումներին[19]: «Շատ քչերն են, որ կարողացել են մազապուրծ ազատվել այդ բորենիների ձեռքից», - գրում է «Հորիզոնի» թղթակիցը[20]:

Հայ մտավորականության ապրիլյան եղեռնից հետո, 1915 թ. հունիսի 2 (15)-ին Կ. Պոլսում թուրքական իշխանությունները սկսեցին 1914 թ. հուլիսի 12-ին ինքնավար Հայաստան ստեղծելու և ահաբեկություն կազմակերպելու ամբաստանությամբ ձերբակալված, Հնչակյան 20 գործիչների դատավարությունը[21]: Ըստ թուրքական պատժագրքի 54-րդ հոդվածի, նրանք Կ. Պոլսի զինվորական դատարանի կողմից մահվան են դատապարտվում՝ մեղադրվելով այն բանում, որ կազմակերպել են «Հնչակյան կուսակցության» գործիչների գաղտնի համագումար, տպագրել ու տարածել են հակակառավարական կոչեր և Օսմանյան կայսրության մի մասն անջատելու նպատակով գրագրություններ են ունեցել՝ գրգռելով օտարներին օսմանյան կառավարության դեմ: Իբր, սպանության մի շարք փորձեր կատարելով, նրանց վերջնական նպատակն էր անկախ Հայաստան ստեղծելը[22]: Հնչակյան գործիչները, որոնց թվում էին Փարամազը (Մատթեոս Սարգսյան), Մ. Զաքարյանը, Ռ. Կարապետյանը, Հ. Բասմաջյանը, Հ. Եկավյանը, Ե. Մանանյանը, Թ. Թովմասյանը, հայտնի արաբագետ, դոկտոր Պեննեն՝ Պ. Թորոսյանը, Ե. Թոփուզյանը, Կ. Պոլսում պատերազմից առաջ հրատարակվող «Կայծ» պարբերականի խմբագիր Գ. Վանիկյանը (Վանիկ), Ա. Աչըքպաշյանը և ուրիշներ, Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում կախաղան են բարձրացվում:

---

[16] Տե՛ս նույն տեղում, Ա. Ա ն տ ո ն յ ա ն, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Բոստոն, 1921:

[17] Տե՛ս Մ. Արքեպիսկոպոս Օ...(Օրմանյան) -ի տեղեկագիրը, Ա, Թուրքահայ աղետը, պատմական փաստաթղթեր, Ս. Էջմիածին, 1919, էջ 16:

[18] Հորիզոն, Թիֆլիս, 1. I. 1916:

[19] Նույն տեղում, 6. X. 1916:

[20] Նույն տեղում, 7. X. 1916:

[21] Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, 1887-1962թթ., Հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 391:

[22] Հայրենիք, Թիֆլիս, 20. IX. 1915:

Այնուհետև Կայսերիում կախաղան են բարձրացվում ևս 32 հայտնի մարդիկ, որոնց թվում 12 հնչակյան գործիչներ[23], իսկ Վանում ապստամբության օրերին բանտի մեջ խեղդամահ են արվում 5 հնչակյաններ՝ Տ. Օտյանը (Ասո), Ս. Սոխալյանը, Հ. Արամիշյանը, Ա. Բրուտյանը և Կ. Տանթոյանը, որոնք երկար ժամանակ բանտարկված էին որպես պետական դավաճաններ[24]:

Թուրքական իշխանություններն արևմտահայ մտավորականության ոչնչացման իրենց քաղաքականությունն իրականացնելու գործում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում արևմտահայ հոգևորական խավի բնաջնջման վրա: Պետականությունից զուրկ հայության կյանքում հոգևոր դասը դարեր ի վեր խաղացել է ազգապահպանության և ազգահավաքման կարևոր դեր: Հայ հոգևորականները զբաղվում էին ինչպես հայության հոգևոր, կրթական, մշակութային զարգացմամբ, այնպես էլ նրա քաղաքական կազմակերպմամբ՝ երբեմն ղեկավարելով ազգային-ազատագրական շարժումները: Թուրքական կառավարությունը, լավ հասկանալով հայության կյանքում հոգևորականության ղեկավար ազդեցությունը, որը կարող էր անցանկալի խոչընդոտներ առաջ բերել հայոց դեմ իրագործվելիք ցեղասպանության ընթացքում, բոլոր հնարավոր միջոցառումները ձեռնարկեց նրան չեզոքացնելու, այսինքն՝ ոչնչացնելու ուղղությամբ: Դեռ եղեռնից առաջ Թուրքիայում օսմանյան կառավարությունը խստագույն հսկողություն էր սահմանել հայ եկեղեցիների ու վանքերի վրա, որոնց թիվը, ըստ Մ. Օրմանյանի կազմած վիճակագրության, 1912 թ. հասնում էր ավելի քան 2200-ի[25]: Պատերազմի ժամանակ թուրքական բարբարոսները կողոպտեցին, ավերեցին ու հրկիզեցին մոտ 2150 հայկական եկեղեցիներ ու վանքեր և կոտորեցին շուրջ 4000 հոգևորականների: Ավերվեցին Արմաշը, Ախթամարը, Մշո Սուրբ Կարապետը, այլ կրոնամշակութային հաստատություններ[26]:

Պատերազմի ժամանակ թուրքական կառավարությունն առանձնահատուկ թշնամական դիրք գրավեց Կ. Պոլսի հայոց պատրիարքության նկատմամբ, թեև վերջինս ընդհանուր առմամբ վարում էր հպատակվելու քաղաքականություն: Ինչպես գրում է Նյու Յորքի «Կոչնակ» շաբաթաթերթը, «Թուրքական կառավարությունը հատուկ հրամանով հատուկ ներկայացուցիչ է նշանակում հայոց պատրիարքարանի և Ազգային ժողովի նիստերին ներկա գտնվելու համար: Պատրիարքարանը մերժում է կառավարության այս որոշումը, որին հետևում է թուրքական կառավարության սպառնալիքը, ուր կտրուկ կերպով հայտնվում է, որ եթե պատրիարքարանն իր կամքով չհամաձայնի կառավարության այս հրամանին, ապա այն ի կատար կածվի բռնի ուժով»[27]:

---

[23] Bryce Viscount, The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. Documents presented to Wiscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs, London, 1916, p. 12.

[24] Հայրենիք, Թիֆլիս, 20. IX. 1915:

[25] Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը ու ներկա կացությունը, 6-րդ հրատ., Բեյրութ, 1960, էջ 259-264:

[26] Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 327:

[27] Կոչնակ, Նյու Յորք, 9. I. 1915, էջ 43:

Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը հայերի տառապյալ դրության կապակցությամբ մի քանի թագրիրներ (խնդրագիր-դիմումներ) ներկայացրեց թուրքական կառավարությանը, բայց ոչ մի արդյունքի չհասավ: Թագրիրներից մեկը, որը գրված էր 1915թ. մայիսի 27-ին, վերաբերում էր գլխավորապես հայ եկեղեցիների կողոպտմանն ու ավերմանը, հոգևորականների հալածանքներին ու սպանությանը: Դրան դատական նախարարը պատրիարքարանի ներկայացուցչին բերանացի պատասխանում է. «Ս. Պատրիարք հոր մեկ թագրիրն ստացա: Հետաքրքրվեցա ու քննեցի. ո՛չ պատրիարքարանի կանոնագրքի և ո՛չ ալ ֆերմաններու գտա պարբերություն մը, որ իրավունք տար պատրիարքարանին այս տեսակ քաղաքական թագրիրներ տալու... Ըսեք Սրբազանին, որ այս միջոցներուն, առանձնաշնորհմանց տված իրավասութենեն դուրս այս տեսակ դիմումներ թող չընե»[28]:

Զավեն պատրիարքն արևմտահայությանն իսպառ ոչնչացումից փրկելու համար փորձեր արեց նաև անձամբ տեսակցել թուրքական ղեկավարների հետ, բայց նախ՝ դա նրան հաջողվեց անբևակայելի քաշքշուկներից հետո, և երկրորդ՝ ոչ մի դրական արդյունք չունեցավ: Այսպես, 1915թ. հունիսի 25-ին նա տեսակցեց դատական նախարար Իբրահիմ բեյի հետ, նրան ներկայացրեց հայերի ծանր կացությունը և հայտնեց, որ կառավարությունը չի վստահում հայերին և ցանկանում է բնաջնջել նրանց: Սակայն, դատական նախարարը ցինիկաբար վստահեցրեց, որ թուրքական կառավարությունը նման հիմարություն չի կարող անել՝ իր երկրի տարրերից մեկին բնաջնջել[29]:

Պատրիարքը, ևս մեկ անգամ, 1915 թ. հունիսի 27-ին, տեսակցում է Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշայի հետ և, չստանալով որևէ արդյունք, միաժամանակ արժանանում է կշտամբանքների[30]: Ավելի սանձարձակ է պահում իրեն հայոց պատրիարքի հետ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը, որը երկար ձգձգումներից հետո, վերջապես 1915 թ. սեպտեմբերի 19-ին մի կերպ ընդունում է Զավեն արքեպիսկոպոսին[31]:

Թուրքական իշխանությունների թշնամական վերաբերմունքը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հանդեպ հանգում է նրան, որ փաստորեն այն վերացվում է՝ մեղադրվելով «հեղափոխականների» ազդեցության տակ ընկնելու մեջ: Ինչպես վկայում է Զավեն պատրիարքը, 1916թ. սկզբին լուրեր են տարածվում այն մասին, որ վերացվում են Հայոց Ազգային սահմանադրությունը և Պոլսի պատրիարքությունը[32]: Շուտով այդ լուրերը ճշտվում են. թուրքական կառավարության՝ 1916թ. հունիսի 26-ի որոշմամբ ընդունվում է «Հայոց կաթողիկոսության և պատրիարքության կանոնագիր», որով վերացվում է (դա ձևական վերացում էր, իսկ փաստականը վաղուց էր եղել) 1860 թ. Ազգային սահմանադրությունը, իսկ Սսի ու Ախթամարի կաթողիկոսությունները միավորվում են մեկ անձի մեջ՝ որպիսին պիտի լիներ Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարքը՝ բոլորովին անկախ Էջմիածնից, և «տաճկահայերի կապն ու հարաբերությունը

---

[28] Զ ա վ ե ն ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս, նշվ. աշխ., էջ 103:
[29] Հայկաշեն տարեգիրք, Կ. Պոլիս, 1922, էջ 153-154:
[30] Նույն տեղում, էջ 157-158:
[31] Զ ա վ ե ն ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս, նշվ. աշխ.,էջ 187:
[32] Նույն տեղում, էջ 160-161:

բոլորովին արգելված էր հայտարարվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ»:[33] Այդպիսի անձ է ճանաչվում Կիլիկիայի Սահակ կաթողիկոս Խապայանը, իսկ Զավեն պատրիարքն աքսորվում է Մոսուլ ու Բաղդադ: Դրանով Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը փաստորեն փակվում է, թեև այնտեղ կար կաթողիկոս-պատրիարքի փոխանորդ (Գաբրիել եպիսկոպոս Ճեվահիրճյանը), և ստեղծվում է նոր «քաղաքական» ժողով՝ կառավարությանը ձեռնտու մարդկանցից: Այդ դրությունը շարունակվում է մինչև պատերազմի ավարտը, երբ նորից վերականգնվում է Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը[34]:

Թուրքիայում հայ եկեղեցու և հայ հոգևորականության նկատմամբ երիտթուրքերի քաղաքականության հետևանքով ստեղծվեց մի այնպիսի վիճակ, որ նույնիսկ գերմանացիներն արձանագրեցին. «Սև ծովեն մինչև Ասորիք քրիստոնեությունը ջնջված է, եկեղեցիները փակված, դպրոցները դատարկված, քահանայք ու քարոզիչները սպանված կամ աքսորված: Կիսաարևելյան քանի մը քաղաք ի բաց առյալ, ամբողջ Անատոլիան իսլամացված է: Տոմարներու մեջ քրիստոնեական անվանք ջնջված են և մահմեդական անուններով փոխարինված»[35]:

1915 թ. սեպտեմբերին Բուլղարիայի կառավարությանը հայության անունից ուղղված դիմումին կից ներկայացված հավելման մեջ նշվում է, որ «թուրքերը մինչ այդ ողջ-ողջ այրել են հայ մի եպիսկոպոսի, երեք ուրիշների կախաղան են բարձրացրել, իսկ երեք եպիսկոպոսներ էլ սպանված են, յոթը արգելափակված են ու երկուսը ձերբակալված»[36]:

Այսպիսով, թուրքական ցեղասպան իշխանություններին հաջողվում է գրեթե իսպառ ոչնչացնել արևմտահայության մտավոր, ղեկավար ուժը՝ դրանով բացառելով ամեն տեսակի կազմակերպված ընդդիմություն իրենց հրեշավոր քաղաքականության իրականացման ճանապարհին:

ОСВЕЩЕНИЕ ФАКТА УНИЧТОЖЕНИЯ ЗАПАДНОАРМЯНСКОЙ ИНТЕЛЛИГЕНЦИИ В АРМЯНСКОЙ ПЕЧАТИ В 1915 – 1916 ГГ..

Т. А.СААКЯН

Резюме

Одним из первых мероприятий турецких властей по осуществлению геноцида армян в годы первой мировой войны явились арест, депортация и уничтожение армянской интеллигенции Турции. Тем самым турецкое правительство стремилось обезглавить западных армян, лишить их руководящей силы.

---

[33] Էջմիածին, Էջմիածին, 1965, N Բ-Գ-Դ, էջ 60:
[34] Մ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 330:
[35] Հ. Տաշյան, Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագրերու համեմատ, Վիեննա, 1921, էջ 26:
[36] Ազգ, Բոստոն, 17. IX. 1915:

Массовые избиения начались в апреле 1915г. по всей территории Османской Турции, особенно страшные масштабы приняв в Константинополе. В период с 24 по 29 апреля 1915г. были арестованы и впоследствии сосланы в глубь Анатолии более 800 влиятельных представителей армянской интеллигенции – врачей, учителей, искусствоведов, писателей, общественно-политических деятелей. Турецкие власти особое внимание уделяли уничтожению западноармянского духовенства, которое в условиях потери армянской государственности на протяжении веков играло решающую роль в сплочении армянского народа и сохранении национального самосознания. В результате турецкие власти смогли почти польностью уничтожить интеллектуальную и руководящую элиту западных армян, ликвидировав любого вида противодействия на пути осуществления своих варварских планов – геноцида армянского населения Османской Турции.